

Խորհրդային մարդը և հետխորհրդային քաղաքացին

Հայաստանի հետխորհրդային ժառանգությանը վերաբերող քննարկումներում հաճախ է խոսվում խորհրդային շրջանից մնացած և «խորհրդային մարդուն» վերագրվող այնպիսի հատկանիշների մասին, ինչպիսիք են կեղծիքը, խաբեբայությունը, խոսքի ու գործի միջև հակասությունները, վարքագծային երկակիությունը, անազնվությունը և նմանատիպ բազմաթիվ այլ բացասական երևույթները:

Ներկայացվող հոդվածում քննարկվում են. **ա.** «խորհրդային մարդու», որպես խորհրդային ժամանակաշրջանից մնացած «ժառանգության» շուրջ ծավալված հայաստանյան դիսկուրսի որոշ առանձնահատկություններ, **բ.** այդ խնդրին վերաբերող խորհրդային և հետխորհրդային հետազոտություններում շրջանառվող մոտեցումները, **գ.** այս համատեսքում նաև հետխորհրդային այդ ժառանգության հայաստանյան առանձնահատկությունները, **դ.** դրա ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա, հարուցած հետևանքները և հնարավոր ելքերը:

Վիրտուալ և լսարանային տարածքներում ընթացող քննարկումներում հաճախ կարելի է լսել այն կարծիքը, որ այսօրվա քաղաքական և հասարակական կյանքում տեղ գտած բազմաթիվ պրոբլեմների պատճառները կապված են «սովետից մնացած» մտածողության այնպիսի հատկանիշների ու վարքագծային պրակտիկաների հետ, որոնք կազմալուծում են իրավիճակը աղեկատորեն գնահատելու մարդու ունակությունը, ինքնուրույն և ռազմավարական մտածողությունը, մղելով նրան հարմարողական ու կոնֆորմիստական գործողությունների: Հանդիպում են նաև այնպիսի դատողություններ, ըստ որոնց այդ մարդիկ ստրկամիտ են, հակված են հպատակվելու, կոռումպացված են, վախկոտ, տուրք են տալիս կեղծիքին ու խաբեբայությանը: Ամենից հուսահատ կարծիքներում այդ խնդիրը դիտվում է անհաղթահարելի թվացող մի երևույթ: Հաճախ նրանց անվանում են «հոմոսովետիկոսներ», դրան միանշանակորեն տալով բացասական իմաստավորում: Հարց է առաջանում, իսկ ո՞վ է հոմոսովետիկոսը: Այս եզրը նոր չէ: Այդ արտահայտությունը և դրա տակ դրված բովանդակությունը ձևավորվել է Սառը պատերազմի տարիներին: Սակայն, հատկանշականն այն է, որ այն շարունակում է շրջանառվել նաև հետխորհրդային ժամանակաշրջանի ակադեմիական և քաղաքական դիսկուրսներում: 1998 թվականին Լիդսի համալսարանի (Մեծ Բրիտանիա) պրոֆեսոր Ֆրանկ Էլլիսը սահմանելով հոմոսովետիկոսին, գրում է. «Դաստիարակվելով այնպիսի մթնոլորտում, որտեղ ջնջված են ճշմարիտի ու կեղծիքի սահմանները և զրկված լինելով որևէ մտավոր նախաձեռնություն ցուցաբերելու կարողությունից, հոմոսովետիկոսը պարզապես չէր կարող լինել այլ էակ, քան կուսակցական գաղափարների ու լոզունգների անուղեղ խոսափող: Դա ոչ այնքան մարդ էր, որքան կոնվեյեր, որի միջոցով վերարտադրվում էր կուսակցական քաղաքականությունը»:

Նախկին դիսիդենտ, խորհրդային սոցիալիզմի քննադատ և Չեխիայի առաջին նախագահ Վացլավ Հավելն իր «Անգորների իշխանությունը» հոդվածում բնութագրում է սովետական սոցիալիզմի պայմաններում ձևավորված մարդուն, որպես երկատված անհատի, ով ապրում է գիտակցված կեղծիքի ու խաբեության միջոցով աղավաղված իրականության պայմաններում:

Ռուսաստանցի հետազոտող Օլեգ Խորխորդինը նույնպես խորհրդային մարդուն վերաբերող իր վերլուծություններում նրան ներկայացնում է, որպես կեղծիքի ու խաբեության մեջ ապրող «սիմուլյատիվ անհատ», ով խուսափում է հանրայնորեն խոսել այն մասին, ինչ մտածում է և ապրում է կեղծիքի ու երեսպաշտության մեջ: Սիմուլյատիվ վարքագծի, երկակի մտածողության և կեղծիքի հասարակության ֆենոմենները Ջեյմս Սքոթը և Լիզա Ուիդինը ներկայացնում են որպես ոչ միայն խորհրդային, այլ՝ ընդհանրապես, ավտորիտար ու տոտալիտար համակարգերում ապրող անհատների համար բնութագրական երևույթ: Այս մոտեցումը քննադատում է Բերքլիի համալսարանի պրոֆեսոր Ալեքսի Յուրչակը, ով գտնում է, որ տեսականորեն կեղծ է բինար օպոզիցիաների միջոցով բնութագրել խորհրդային մարդուն ու հասարակությանը, որն իրականում շատ ավելի բազմակողմ երևույթ է, քան ծայրահեղացված կերպով այն հրեշավոր կամ մարդկային բնութագրելը:

Եթե իրոք խուսափենք ծայրահեղ երկբևեռ այս գնահատականներից, որը խորհրդային մարդուն առաջարկում է գնահատել որպես կեղծիքի մեջ գիտակցորեն ապրող մարդու, ապա կարելի է փորձել ամեն դեպքում հրվել իրական պրակտիկաներից: Ա. Յուրչակը իր «Ամեն ինչ թվում էր հարվերժ, մինչև այն դադարեց գոյություն ունենալ» (Everything was forever until it was no more) գրքում առաջարկում է խորհրդային իրողությունները վերլուծել դիսկուրսների փոխակերպման միջոցով: Քննադատորեն վերլուծելով վերն արտահայտված «կեղծ», «խաբեբայական», «սիմուլյատիվ» անհատներին վերաբերող կարծիքները, նա նկատում է, որ խորհրդային մարդուն նկարագրող *հոմոսովետիկոս* եզրը իրականում չի արտացոլում խորհրդային մարդուն ու նրա ապրելակերպը: Նա առաջարկում է չդեմոնիզացնել խորհրդային մարդուն և խնդիրը տեղափոխել մեթոդաբանական այլ հարթություն և քննարկել այն ուշխորհրդային շրջանում ԽՍՀՄ-ում տարածված սահմանադրող (constitutive) և պերֆորմատիվ դիսկուրսային հարթություններում, երբ մարդը ոչ թե գնում էր գիտակցված կեղծիքի, այլ՝ մասնակցելով ձևական համարվող միջոցառումներին, ապահովում էր պերֆորմատիվ դիսկուրսի իսկության համար անհրաժեշտ կոնվենցիոնալությունը: Դա նպաստում էր խորհրդային իրականության աստիճանական փոխակերպմանը և այնպիսի տարածքների ձևավորմանը, որտեղ խորհրդային ճշմարտությունները դադարում էին իրականությունը սահմանադրելու միջոցով նույնությամբ վերարտադրելուց: Դիսկուրսիվ նման իրողությունների փոփոխությունը նա համարում է ԽՍՀՄ փլուզման պատճառներից մեկը:

Ռուս գիտնական Նիկոլայ Վախտինը խոսելով խորհրդային խոսքային պրակտիկաների մասին, նկատում է, որ դրա առանձնահատկություններից մեկն այն էր, որ ԽՍՀՄ-ում ճիշտը և ճշմարտությունը կամ ճիշտը և ճշմարիտը հաճախ չէին համապատասխանում իրար: Օրինակ, ճշմարտությունն այն էր, որ մարդկանց մեծ մասը գողանում էր պետական գույքը, պետական պաշտոնյաները իրենք խրախուսում էին կաշառքը, գողությունը, կեղծիքը, սակայն ճիշտ չէր համարվում այդ ամենի մասին խոսել կուսակցական ու կոմերիտական ժողովներում: Ճիշտը համարվում էր այն, որ մասնակցեիր այդ ժողովներին և ծափահարեիր խորհրդային մարդու բարոյական բարձր հատկանիշների մասին ամբիոնից հնչող կարծիքին, սակայն իրական կյանքում հրաժարվել այդ ծափահարածին համապատասխանող կյանքով ապրելուն: Կամ չնայած համագումարներում, ժողովներում և այլ զանգվածային միջոցառումներում հնչող հնգամյակի պլանների կատարման մասին թվային տվյալները չէին համապատասխանում ճշմարտությանը, սակայն ճիշտ էր համարվում ամբիոնից դրանք ներկայացնող զեկուցողին ծափահարելը:

Բանասացներից մեկը քննադատելով ներկայիս համակարգը, խոսում է այն մասին, որ պաշտոնյաները թալանում են երկիրը և պաշտոնի են ձգտում հենց միայն իրենց անձնական բարեկեցության համար, ոչ մի կերպ չմտախոգվելով ժողովրդի մասին: Այնուհետև, համեմատական անցկացնելով խորհրդային ժամանակների հետ, նկատեց, որ «Սովետի ժամանակ էդպես չէր: Ամոթ կար, չափ կար ամեն ինչին: Չենք ասում չէին գողանում, բայց այնքան էին գողանում, որ համ պետությունն էր դիմանում, համ էլ սովորական մարդկանց էլ էին մի բան թողնում: Ամեն մարդ մի բան կարողանում էր տանել տուն, իր ընտանիքը պահել: Վայոց ձորի գյուղերից մեկում, նախկինում դպրոցի ուսուցիչ, կոմունիստ, արդեն տարեց բանասացներից մեկը հիշեց, որ իրենց գյուղի տների մեծ մասը կառուցվել է Արփա-Սևան թունելի շինարարության ժամանակ, երբ Եղեգնաձորի կուսակցական շրջանային բարձրագույն պաշտոնյաները ներքին հրահանգ էին տվել աչք փակել շինարարությունից կատարվող շինանյութերի գողության վրա: Իհարկե, այդ գողությունը հենց այնպես չի թույլ տրվել: Գողոնը տուն տանելու համար գողացողը «մաղարիչ» է արել իրեն «լավություն» անող շինարարության աշխատակից: «Մաղարիչ» կոչվածը ընդունված չափի դրամական որոշակի փոխհատուցում էր գողություն անողի կողմից գողությունը թույլ տվողին: Շինանյութերի ձեռք բերման մեկ այլ ձև էլ մայրուղով անցնող շինանյութ տեղափոխող բեռնատարների վարորդների հետ պայմանավորվելն էր: Ինչպես բանասացներից մեկը նկատեց, թե փող ունեիր ապրանք ճարելը դժվար չէր: Անհրաժեշտ էր ընդամենը դուրս գալ մայրուղի, պետական շինանյութ տեղափոխող ցանկացած մեքենա կանգ էր առնում և գումարի շուրջ պայմանավորվելուց հետո, շինանյութը տեղափոխում ու բեռնափաթում գնորդի բակում: Իմ զարմացած հարցին, թե արդյո՞ք չէր վախենում բռնվելուց, մարդը պատասխանեց, որ «սիստեմն» էր այդպես: Այդ փողից «բռնողներն» էլ «բաժին» ունեին: Հետո, ամեն ինչին էլ չափ կար: Վարորդներն էլ ամբողջը չէին գողանում: Այնպես էին անում, որ և սովորական մարդկանց վաճառեին, և շինարարության շինանյութը մատակարարեին: Արդյունքում, ստացվում էր, որ ողջ Եղեգնաձորի շրջանի գյուղերի ժամանակակից երկհարկանի տների մի զգալի մասը կառուցվել են պետական շինարարություններից գողությամբ ձեռք բերված շինանյութերով: Խնդիրն այն էր, որ Խորհրդային Միությունում չկային շինանյութերի ազատ վաճառք իրականացնող խանութներ, որտեղից մարդը կարող էր պարզապես ազատ կերպով շինանյութ գնել: Եվ մարդիկ շինարարության համար անհրաժեշտ շինանյութը հիմնականում ձեռք էին բերում նման ճանապարհով: Կաշառվում էին նաև շինարարության վրա աչք փակող թաղային տեսուչները, ովքեր ցանկացած մասնավոր շինարարություն իրականացնելու սկզբում հայտնվում էին, սակայն ստանալով իրենց բաժին կաշառք-«մաղարիչը» հեռանում էին, հորդորելով ամեն ինչ անել արագ ու աննկատ: Միևնույն ժամանակ, այդ նույն մարդիկ, ովքեր աշխատում էին Արփա-Սևան թունելի շինարարությունում, մասնակցում էին այդ շինարարությանը նվիրված կուսակցական և կոմերիտական ժողովների, աշխատավորական կոլեկտիվների հավաքների, խոսում շինարարների անձնվիրությունից, սոցիալիստական աշխատավորության ազնվությունից, կուսակցականների ու կեմերիտականների անաղարտությունից, դատապարտում գողությունը, անազնվությունը, թնդացնում ժողովների դահլիճները ծափահարություններով, սոցիալիստական աշխատանքը, աշխատավորության ազնվությունը և անձնվիրությունը գովաբանող ցուցապաստառներով մասնակցում տոնական շքերթների, այնուհետև նորից անցնում իրենց ամենօրյա պրակտիկաներին: Ինձ հետ ունացած հարցազրույցների ժամանակ շատերն են գողությունը թույլատրող սովետական հաստատությունների

ղեկավարներին կամ տեղական ու հանրապետական մաշտաբի կուսակցական պատասխանատուներին բնութագրել որպես «լավ մարդ»: Նման պատմություններ գրանցվել են նաև ոչ միայն Արփա – Սևան թունելի կառուցման հետ կապված, այլև Լոռու մարզի, Սյունիքի և այլ տարածաշրջաններում ԽՍՀՄ շրջանում իրականացված լայնամաշտաբ շինարարությունների հետ կապված: Այսինքն նկարագրված մասնակի երևույթներ չեն եղել, այլ՝ համատարած: Կարելի է վստահաբար ասել, որ ներկայիս Հայաստանի գյուղերում ԽՍՀՄ շրջանում, հիմնականում 1970-ականներից սկսած ժամանակաշրջանում կառուցված երկհարկանի ժամանակակից տների մեծ մասը կառուցվել է վերը նկարագրված եղանակով: Այսինքն, նայելով այդ ժամանակաշրջանում կառուցված մասնավոր տների ծավալներին, կարելի է դատել այդ ժամանակաշրջանում իրականացված լայնամաշտաբ գոյությունների մասին, որին փաստացիորեն այս կամ այն չափով մասնակցել է բնակչության զգալի մասը: Իսկ նրանք, ովքեր չեն մասնակցել, համարվել են միամիտ, կյանքից բան չհասկացող, հաճախ ծաղրվող փոքրամասնություն:

Վերադառնալով Ն. Վախտինի այն մտքին, որ խորհրդային մարդու համար ճշմարտությունն ու ճիշտը տարբեր բաներ էին, փորձենք հասկանալ թե ինչպե՞ս էին դրանք հարաբերվում միմիանց:

Ըստ իմ իրականացրած որակական հարցումների տվյալների կարելի է առանձնացնել *Ճշտի և ճշմարտության* փոխհարաբերությանը բնորոշ մի քանի հատկանիշներ.

- Նախ, կյանքում ավելի գործնական համարվող **ճիշտը դա հիմնականում վերաբերում էր պրակտիկաներին, այլ՝ ոչ գաղափարախոսությանը**: Ճշմարտությունները սահմանվում էին գաղափարախոսության ոլորտում և այն սահմանելու մենաշնորհը ԽՄԿԿ-ին էր պատկանում:

- **Ճիշտը չպետք է համապատասխաներ ճշմարտությանը**: Իհարկե, լինում էին մարդիկ, ովքեր փորձում էին կյանքում առաջնորդվել ճիշտը և ճշմարտությունը համապատասխանեցնելու պրակտիկայով, սակայն նման մարդկանց համարում էին ոչ պրակտիկ և պիտակավորում՝ «կոմունիստ», «բուլշևիկ», «ակտիվիստ» բառերով, որոնք այդ կոնտեքստում ծաղրական ու բացասական իմաստավորում էին ստանում: Այս առումով կարելի է ասել, որ **ճիշտը**, որոշ առումով, ավելի շատ պետք է իմիտացներ *ճշմարտությունը*, այլ՝ ոչ նույնական լինել դրա հետ:

- **Ճիշտը նաև չպետք է բացեփառ հակադրվեր ճշմարտությանը**: Ճիշտը պարզապես պետք է գոյություն ունենար ինքնին, մանրելով ճշմարտությունից որոշակիորեն դիստանցավորված կերպով: Դրանց արանքում կար որոշակի միջակայք, որը թույլ էր տալիս մարդկանց մանրելու ճշտի ու ճշմարտության միջակայքում:

- **Ճիշտը պետք է ներառեր նաև ճշմարտությանը ֆորմալ մակարդակում համաձայնություն ցուցադրելու պրակտիկաներ**: Սա շատ հետաքրիր նրբերագն է, երբ ճիշտը չպետք է համաձայնեցվեր ճշմարտությանը, սակայն միաժամանակ ոչ միայն բացեփառ չպետք է մերժեր այն, այլև՝ ներդաշնակության իմիտացիա ստեղծելու նպատակով պետք է ներառեր ու պահպաներ ճշմարտությանը իր համապատասխանությունը ցուցադրելու պրակտիկաներ: Դրանք սովորաբար տարատեսակ ժողովները, համագումարները և նիստերն էին, որի ժամանակ ճիշտ ապրող մարդիկ ցուցաբերում էին իրենց համաձայնությունը ճշմարտության ձևակերպման և դրա վերարտադրության օգտին արվող քվերարկություններին մասնակցելու միջոցով: Ասենք օրինակ, պրակտիկորեն խորհրդային կուսակցականացված գեղարվեստական խորհուրդների կողմից մշակվող խորհրդային

մարդու գեղագիտությանը չհամապատասխանող արտասահմանյան, բուրժուական ճաշակ ներկայացնող հագուստին և այլ կենցաղային իրերին նախապատվություն տվող կուսակցական պաշտոնյան կուսակցական համագումարում ծափահարում և կողմ էր քվեարկում իր իրական նախընտրությանը արմատականորեն չհամապատասխանող խորհրդային գեղագիտությունը ներկայացնող կուսակցական պատասխանատուների ելույթին:

Վերն հիշատակված հեղինակներից Ալեքսի Յուրչակը, խոսելով պերֆորմատիվ դիսկուրսի առանձնահատկությունների մասին, կարևոր է համարում կոնվենցիոնալության ապահովումը: Որպեսզի որևէ խոսք համարվի ճշմարտացի, այն պետք է ուղեկցվի որոշակի պայմանականությունների պահպանմամբ: Ասենք օրինակ, որպեսզի դատավորի խոսքը համարվեր ճշմարիտ, այն պետք է արտասանվեր դատարանի դահլիճում, այլ՝ ոչ թե զբոսայգում կամ թատրոնում: Վերլուծելով ուշխորհրդային տարիներին ձևավորված իրավիճակը, Յուրչակը դրան բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ համարում է այն, որ աստիճանաբար կարևոր է համարվում ոչ թե այն ինչ ասվում էր, այլ՝ գաղափարախոսական առաջնորդների ճառերին ուղեկցող կոնվենցիոնալության ապահովումը: Հենց այստեղ է, որ հնարավոր էր դառնում ճշտի ու ճշմարտության միջև ճեղքվածքի առաջացումը, երբ պրակտիկաների ձևավորման համար կարևոր էր դառնում ոչ թե այն ասելիքը, որը պետք է վերարտադրեր իրականությունը, այլ՝ այն պայմանականությունների պահպանումը, որոնք որպես ուղեկցող երևույթներ անհրաժեշտ էին իրականությունը վերարտադրող դիսկուրսին: Ըստ հասարակագիտության մեջ հայտնի բանաձևումներից մեկի, որը ստացել է Լեֆորի պարադոքս անվանումը, հասարակական և քաղաքական միավորների վերարտադրության հիմքում ընկած են գաղափարախոսական դիսկուրսի միջոցով վերարտադրվող ճշմարտության և հասարակությունում տարածված պրակտիկաների համապատասխանությունը: Պրակտիկաները ժամանակի ընթացքում միշտ էլ հակված են լինում հեռանալ և անջրպետվել գաղափարախոսություններից: Անջրպետի խորացումը կարող է հանգեցնել քաղաքական համակարգի փլուզման: Ըստ Յուրչակի, ԽՍՀՄ փլուզման պատճառներից մեկը հենց գաղափարախոսության ու պրակտիկաների միջև անջրպետի խորացումն էր:

Այս անջրպետի ձևավորման պատճառներից մեկը հենց կապված էր ճշտի ու ճշմարտության միջև ձևավորված անհամապատասխանության հետ: Հաճախ ճիշտ համարվող պրակտիկաները այն աստիճան էին հեռացած ճշմարտություն համարվող գաղափարախոսությունից, որ խորհրդային իրականությունը ուսումնասիրող որոշ հետազոտողների մոտ ստեղծում էր տպավորություն, թե խորհրդային մարդը ապրում էր այնպիսի զուգահեռ իրականություններում, որոնք միմիանց հետ ոչ միայն համերաշխ չէին, այլ նույնիսկ ծայրահեղորեն հակասական էին:

Ըստ էության հենց այս երևույթն է, որը հաճախ նաև դառնում է քննարկման ու քննադատության առարկա, որպես «Սովետից» մնացած ժառանգություն և նման հակասական վարքագիծ ունեցողներին են մարդիկ անվանում «Սովետի մնացուկներ»: Դրա հետևանքում են, օրինակ, մարդիկ ընտրությունների շրջանում կաշառվելով իրենց քվեն տալիս այն կուսակցության թեկնածուի օգտին, ում իրենք իսկ համարում են ստեղծված ծանր իրավիճակի մեղավորներ, «թալանչիներ» և այլն: Հետաքրքիր է, որ հաճախ իրենց վարքագիծը արդարացնելու համար, մարդիկ ասում են. «ամեն ինչ սուտ է, եղունգ ունես զլուխդ քորի»: Այսինքն, չկա ճշմարտություն և աշխարհը համատարած կեղծիք է: Բայց կա

դրա մեջ ապրելու ճիշտ ձև: Եվ գլխավորը այդ ճիշտ ձևը պահպանելն է, այլ՝ ոչ թե կեղծիքի աշխարհը վերափոխելու ու այն ճշմարտության աշխարհի դարձնելու մեջ:

Ամփոփելով, կարելի է ասել, որ Հայաստանի համար վերը նկարագրվածի գլխավոր պրոբլեմն այն է, որ պահպանվում է այն տարածված մտայնությունը, թե կարելի է ապրել առանց գաղափարների, իսկ գլխավորը՝ ճիշտ կողմնորոշվելն է: Այս իրավիճակը փոխելու հնարավոր ուղիներից մեկը հասարակությունում գաղափարախոսական դիսկուրսների ծավալումն է, ինչի համար անհրաժեշտ պայմանը քաղաքական գաղափարախոսություններ կրող նոր ուժերի ձևավորումն է: